Ն Ո Ր Գ Ր Ք Ս Ր

ՍՍԱՅԻ ՆԶԵՅԻ — «Վերլուծություն բերականության», աշխատասիրությամբ՝ Լ. Դ. Խաչերյանի, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, 1966 թ., տպաքանակը՝ 1000, 208 էջ, գինը՝ 1 ռ. 14 կոպ.։

Այս աշխատությունը Սսայի Նշեցու մատենագիտական ժառանգության ամենակարևոր երկն է, որը ստեղծվել է 1307 թվականից առաջ։ Այն առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է գրվում քննական բնագրով՝ պատրաստված 15 ձեռագրերի համեմատության հիման վրա։

Գրքի պատասխանատու խմբագիրն է Ա. Ա. Աբրահամյանը։

«ՀԱՅԵՐԻ ԳԵՆՈՑԻԴԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ» (Փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, 1966 թ., տպաքանակը՝ 8000, 562 էջ, գինը՝ 2 ռ. 32 կոպ.։

Ժողովածուն լույս է տեսել ռուսերեն լեզվով և բովանդակում է 245 փաստաթուղթ, որոնք մերկացնում են հայ ժողովրդի նկատմամբ Թուրքիայի ղեկավար շրջանների վարած ջարդարարական քաղաքականությունը։ Այն բաղկացած է երկու սաից՝ «Հայերի ջարդը Աբդուլ-Համիդ սուլթանի օրոք (1876—1908 թթ.)», և «Երիտթուրքերի կողմից հայության զանգվածային կոտորածը (1909—1918 թթ.)»։

Ժողովածուի նյութերի հիմնական մասը տպագրության է պատրաստել ակադեմիկոս Մ. Ռ. Ներսիսյանը, որը և գրել է գրքի առաջաբանը։ Նյութերի մի մասը պատրաստել է պատմական գիտությունների թեկնածու Ռ. Սահակյանը։ Գրքում բերված են ինչպես ռուս, այնպես էլ արևմտաեվրոպական առաջավոր գործիչների վկայություններն ու կարծիքները գենոցիդի վերաբերյալ։

Ժողովածուի շատ փաստաթղթեր հրապարակվում են առաջին անգամ։

Կ. Ս. ԿՈՋՄՈՅԱՆ — «Ալավերդի», Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, 1966 թ., տպաքանակը՝ 1000, 228 էջ, գինը՝ 55 կոպ.։

Մենագրության հեղինակը պատմական վավերագրերի, ինչպես նաև իր հավաքած փաստական հարուստ նյութերի հիման վրա շարադրել է Ալավերդի քաղաքի, նրա բանվոր դասակարգի հեղափոխական պատմությունը։

Գրքի հիմնական մասը նվիրված է սոցիալիստական Ալավերդու ժամանակակից պատմությանը, նրա բնակիչների աշխատանքային առօրյային։